## ՀԱՂՈՐԴՈՒՄ

## ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ. ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2023թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 4 028 638 700 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 2 902 669 085 դրամ, կամ 9 ամսվա մուտքերի առաջադրանքը կատարվել է 72,1 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 723 787 100 դրամի դիմաց կատարվել է 1 176 529 885 դրամ կամ կատարվել է , 68,3 %-ով :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարեկան առաջադրանքը 1 263 273,7 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 791 708,1 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 62,7 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 52,5 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 71,9 %-ով, տեղական տուրքերը՝ 106,7 %-ով, պետական տուրքերը՝ 103,5 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 78 929,4 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 84 182,7 հազ. դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 18 000,0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 18 632,5հազ. դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 1 723 740,4 հազ. դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 464 511,4 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 387 220,6 հազ. դրամ,կամ կատարվել է 83,4 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 49,7 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 161,8 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել են 2 398,8 հազ. դրամ՝ 3 998,0 հազ. դրամի դիմաց :

4. **Տեղական վճարների մասով** բյուջեում նախատեսված 369 883,7 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 235 614,2 հազ. դրամ կամ կատարվել է 63,7 %, որից աղբահանության վճարների մասով 165 010,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 104 818,3 հազ. դրամ կամ կատարվել է 63,5 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 61,5 %-ով:

<u>Ծախսեր</u>

2023 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 9 ամսվա ծախսերը կատարվել են 52,7 %-ով՝ 4 028 638,7 հազ. դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 2 122 564,3 հազ. դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 58,7 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 79,0 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 65,6 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 79,3 %-ով:

ե/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 44,6 %-ով:

զ/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 67,3 %-ով:

է/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 84,1 %-ով:

**Մասիս համայնքի 2023թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը** նախատեսված 3 457 654, 907 հազ. դրամի դիմաց կատարվել է 2 249 252, 97 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 1 164 384, 072 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 384 868, 906 հազ. դրամ, բյուջեի վարչական մասից հատկացում ֆոնդային մասին՝ 700 000, 0 հազ. դրամ:

**2023 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը** կազմել են 565 743, 77 հազ. դրամ, որից՝

ա/ Համայնքային ենթակայության շենքերի , շինությունների կառուցման, հիմնանորոգման, համայնքային ճանապարհների, մայթերի կառուցման և հիմնանորոգման, բակերի, այգիների բարեկարգման համար, համայնքում առկա ոռոգման համակարգերի հիմնանորոգման, համայնքային ենթակայության մշակույթի տների կառուցման, հիմնանորոգման, հուշարձանների և մշակութային արժեքների պահպանման և վերանորոգման համար ծախսերը կազմել են 814 440, 67 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, այլ մեքենա սարքավորումների, ոչ նյութական արժեքների համար ծախսերը կազմել են 126 052, 0 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 7 670,0 հազար դրամ,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ